

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԻ ԿԱՊԸ ԵՐԿՆԱՑԻՆ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ<sup>1</sup>

Այսօր մեր ունեցած տեղեկութիւնները Հայաստանում՝ աստղագիտական գիտելիքի հնագոյն ժամանակների վիճակի մասին շատ կցկտուր են: Ունենք որոշակի հիմնաւոր տուեալներ վաղ միջնադարի Հայաստանի աստղագիտական գիտելիքի մասին՝ չնորհիւ է. դարի մեծագոյն գիտնական Անանիա Շիրակունու ծաւալուն եւ հիմնարար երկերի: Ունենք տեղեկութիւններ նաեւ Անանիային յաջորդած ժամանակների հայաստանեան աստղագիտական գիտելիքի մասին՝ չնորհիւ Ժ.-Ժ. դարերի հայ գիտնականներից մեզ հասած երկերի (Յովհաննէս Կողեռն, Յովհաննէս Սարկաւագ, Յակոր Ղրիմեցի Առաքել Նախիջեւանցի, եւ այլք): Որոշ սահմանափակ տուեալներ էլ կարելի է քաղել մաշտոցեան շրջանի եւ դրան յաջորդած շրջանի վաղագոյն թարգմանական եւ ինքնուրոյն երկերից: Սակայն քրիստոնէութեան ընդունումից առաջուայ աստղագիտական գիտելիքի մասին մեր ունեցած տեղեկութիւնները միայն կողմնակի, անուղղակի աղբիւրների հիման վրայ արուած սահմանափակ եզրակացութիւնների մակարդակի են:

1 Այս աշխատութեան համառօտ տարրերակը իրեւ գեկուցում կարդացուել է Բիւրականի աստղագիտարանում՝ «Աստղագիտութեամ կապն այլ գիտութիւնների, մշակոյքի եւ հասարակութեամ հետ» գիտաժողովում 2014 Հոկտեմբերի 9ին: Տե՛ս ՑԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ, Հ. Ա. - ՄԻՔԱՅԼԵԱՆ, Ա. Մ. - ՖԱՐՄԱՆՆԵԱՆ, Ս. Վ. (խմբ.), Աստղագիտութեամ կապն այլ գիտութիւնների, մշակոյքի եւ հասարակութեամ հետ, Հայկական աստղագիտական ընկերութեան XIII տարեկան համաժողով, 7-10 Հոկտեմբերի, 2014, Բիւրականի աստղագիտարան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» իրատ., Երեւան 2015, 322-333:

**Հնագոյն ժամանակների աստղագիտական գիտելիքի մասին մեզ մատչելի հնարաւոր աղբիւրները կարելի է տրոհել երկու խմբի:**

**ա. նիւթական կրիչների միջոցով մեզ աւանդուած տեղեկոյթի աղբիւրներ եւ՝**

**բ. ոչ-նիւթական կրիչների միջոցով աւանդուած տեղեկոյթի աղբիւրներ:**

Այս խմբերից առաջինի մէջ են Գեղամայ, Վարդենիսի, Սիւնեաց լեռներում եւ պատմական Հայաստանի այլ վայրերում սփռուած հազար-հազարաւոր ժայռապատկերների ամբողջութիւնը, տարբեր հնագիտական գտածոները, որոնց շարքում շատ կարեւոր տեղ ունի հնագոյն խեցեղէնը իր հարուստ զարդապատկերումով։ Անշուշտ, պատշաճ հետազօտութեան պարագայում Հայաստանի հնագոյն ժամանակների գիտութեան մասին բազմազան տեղեկութիւնների շատ հարուստ շտեմարաններ կարող են դառնալ թէ՛ բազմահազար ժայռապատկերները, եւ թէ՛ հնագոյն խեցեղէնը։ Սակայն, ցաւօք, այս աղբիւրների տուած մեծածաւալ տեղեկոյթը տակաւին բաւարար չափով հետազօտուած չէ։ Սրանց հետազօտութիւնը տակաւին նոր է սկսում եւ առայժմ դրանց հիման վրայ հնարաւոր է անել միայն ընդհանուր որակական եղակացութիւններ<sup>2</sup>:

Այս առաջին խմբի մէջ հարկ է ընդգրկել նաեւ պատմական Հայաստանով մէկ սփռուած հնագոյն վիմակերտ կառոյցները, ինչպիսիք են Սիսիանի մօտ գտնուող յայտնի Զօրաց քարեր<sup>3</sup>, նմանատիպ այլ կառոյցները, բարձրեռնային տարբեր վայ-

2 Տե՛ս, օրինակ, ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Յ. Ա., Հայաստամի Աախնադարեան թշանքարերը, ՀԱՄԱՐ ԳԱԱ հրատ., Երևան 1973: Նոյն, Գիտութիւնն սկսում է Աախնադարում, «Սովետական գրող», Երևան 1978: ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումները ըստ Ա.Գ. 28-27-րդ դարի Քրեղամի զարդապատկերի վերլուծութեան, ի Բազմավայ, 2007, 149-163:

3 Վերջին ժամանակներս որոշ հետազօտողների կողմից փորձեր են արւում այս յուշարձանը վերանուանելու «Քարահունչ» առանց պատշաճ հիմնաւորման։ Երբեւ վարկած՝ այս յուշարձանի եւ «Քարահունչ» անուան կապը առաջին անգամ առաջարկուել է կ. Պարսամեանի կողմից (տե՛ս ՊԱՐՍԱՄԱՅԻ, Է. Ը., Օ возможном астрономическом назначении мегалитических колец Ангелакота, Сообщения Бюраканской обсерватории, LVII, 1985, ст. 101-103), որ յսույ տարբեր հետազօտողների կողմից ընկալուել

ըերուամ պահպանուած մենաքարերը<sup>4</sup> եւ այլն: Սակայն այս յուշարձանները եւս ճնշող մեծամասնութեամբ բնաւ հետազօտուած չեն, իսկ դրանց մի քանի սակաւաթիւ նմոյշներն էլ հետազօտուած են յոյժ անբաւարար:

Երկրորդ խորմբը իր ընդգրկումով աւելի ծաւալուն է քան առաջինը: Այս խմբում առաջնային տեղ ունի Հայոց լեզուն, որի՝ մեզ հասած հարուստ բառապաշարը եւ որոշ այլ իրողութիւնները կարող են անգնահատելի աղբեմը լինել հնագոյն ժամանակների Հայոց գիտութեան ու մշակոյթի վիճակի մասին տեղեկութիւնների համար: Նոյնը վերաբերում է նաև հայկական ազգագրութեանը, բանահիւսութեանը եւ աւանդական մշակոյթի այլ ճիւղերին: Թէպէս որոշ արդիւնք ստացուած է նաև այս ասպարէջներում<sup>5</sup>, սակայն հարկ է նշել, որ, ցաւօք, այստեղ եւս արուածը եւ ստացուած արդիւնքը տակաւելին շատ հեռու են բաւարար լինելուց: Մի առանձին սապարէզ էլ, այս երկրորդ խմբի մէջ Հայոց օրացոյցն է: Որպէս մարդկային մշակոյթի եւ, ի մասնաւորի՝ կրօնի, անբաժանելի բաղադրիչ մաս, օրացոյցը մեզ է հասել մարդկութեան պատմութեան ամենավաղ անցեալից, ժամանակի ընթացքում ենթարկուել է զանազան փոփոխութիւնների եւ այս կամ այն կերպ իր վրայ կրել է այդ փոփոխութիւնների հետքերը: Մրա հետ մէկտեղ՝ օրացոյցը, լինելով մաթեմատիկական կառոյց, համեմատաբար դիւրին է ենթարկում վեր-

է իրեն ապացուցուած իրողութիւն: Այդպիսի վերանուանումը հիմնաւորելու իմացունի միակ փորձը տե՛ս ՎԱՀՐՄԴԵԱՆ, Մ. - ՎԱՀՐՄԴԵԱՆ Վ., Քարահումզ յուշարձամի անուանման շուրջ, ի Բազմակից, 2010, թիւ 1-2, 161-177:

- 4 Մրաց շարուամ, անցուշտ, հարկ է դնել նաև բազմաթիւ վիշապակարությունները, որոնց մի սոտար մասը, ցաւօք այսօր իրենց նախնական տեղից հանուած ու տեղափոխուած են նրեւանի տարրեր կէտեր եւ տեղադրուած են իրեն բաղադրիմ միշապային զարդարանք: Անշուշտ, անհրաժեշտ է դրանք բոլորը վերադարձնել իրենց նախնական տնելերը եւ վերականգնել հնագոյն մշակոյթի այդ եզակի յուշարձանների նախնական վիճակը:
- 5 ԲՊՈՒՏԵԱՆ, Գ., Որոշ օրացուցային իրողութիւններ հայկական հրաշապատում հէթարպերում, Ա., ի Էջմիածին, 2008, Բ., 49-70: Նոյն՝ Որոշ օրացուցային իրողութիւններ հայկական հրաշապատում հէթարպերում. Բ., ի Էջմիածին, ԺԲ, 2009, 62-83, ի Էջմիածին, 2010, Զ, 22-44, եւ նոյնի՝ Տարածութեան և ժամանակի մասին պատկերացումները ըստ հայկական հրաշապատում հէթարպերի, ի Բազմակից, 2011, 3-4, 459-484:

լուծութեան, եւ սրա շնորհիւ աւելի հեշտ է օրացոյցից դռւրս կորզել իր «պարունակած» տեղեկոյթը այն ժամանակների մշակութային իրողութիւնների մասին, որոնց միջով անցել է տուեալ օրացոյցը: Այս այս պատճառով էլ, իբրեւ հնագոյն ժամանակների հայաստանեան աստղագիտական գիտելիքի վիճակի մասին գաղափար կազմելու հնարաւոր օժանդակ միջոց, մեզ կարող է էապէս օգտակար լինել հայկական օրացոյցը իր տարբեր ժամանակների վիճակներով:

**Արդ նայենք, թէ ի՞նչ գիտենք մենք այսօր Հայոց օրացոյցի մասին:**

Ուղղակի աղբիւրներով մեզ աւանդուած օրացուցային տեղեկոյթը վերաբերում է Հիմնականում Հայոց պատմութեան քրիստոնէական շրջանին: Մաշտոցեան եւ դրան յաջորդող շրջանի սկզբնաղբիւրների տեղեկութիւնների հիման վրայ մենք ունենք Հայկական օրացոյցի աւանդական կառուցուածքը:

Տարեցանը բաղկացած է եղել բուն տարուց, որ պարունակել է 12 ամիսներ՝ իւրաքանչիւրը 30ական օրով եւ այս ամիսներից յետոյ զրուող 5 յաւելեալ օրերից: Ստացուել է 12 ամիս  $x$  30 օր + 5 օր = 365 օր կառուցուածքով օրացոյց, որտեղ բուն տարին եղել է միայն 12 ամիս  $x$  30 օր = 360 օր տեւողութեամբ մասը, իսկ մնացեալ 5 օրերը, որ կոչուել են «աւելիք», կամ «աւուրիք աւելեաց», համարուել են տարուց դուրս՝ արտատարեկան եւ մեկնաբանուել են իբրեւ «արարչութեան օրեր» (այն 5 օրերը, որ նախորդել են մարդու արարմանը)<sup>6</sup>: Նահանջի օր եւ նահանջ տարիներ այս օրացոյցում չեն կիրառուել<sup>7</sup>:

Այսպիսի օրացոյցը իր շատ պարզ ներքին կառուցուածքի եւ իբրեւ դրա հետեւանք՝ կիրառական դիւրութեան հետ մէկտեղ ունի նաև որոշ թերութիւններ: Այս օրացոյցի Հիմնական թերութիւնն այն է, որ, ի հետեւանք այստեղ ընդունուած 365օրեայ կայուն տարեցանի եւ արեւադարձային տարուայ 365.2422օրեայ տեւողութիւնների միջեւ եղած 0.2422 օր տարբերութեան, այս օրացոյցի ամիսներն ու ամսաթուերը դանդաղ սահելով տեղա-

6 ԱՆԱՆԻՍ. ՇիրԱԿԱՑԻ, Տիեզերագիտութիւն եւ տումար, ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա., (աշխտ.), ԱՃԱՌԵԱՆ, Հ. (խմբ.), Հայրենիքատ, Երևան 1940, 70: Նաեւ՝ ԱՆԱՆԻՍ. ՇիրԱԿԱՑԻՆԻՑ ՀԱՄԱՐՈՂԻ, Մատենագրութիւմք, ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա., (աշխտ.), ՀՍՍՌ Մատենագրաբանի հրատ., Երևան 1943, 311:

7 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, Մայր Աքոն Ս. Էջմիածին, 1997, 27-29:

շարժում են տարուայ եղանակներով եւ մէկ ամբողջական պտոյս են գործում տարուայ եղանակներով 1506 տարում (1506 x365.2422 ≈ 1507x365): Բնականաբար, նոյնը վերաբերում է նաեւ այս օրացոյցի տարեմուտին, որ եւս 1506 տարում մէկ պտոյս է կատարում տարուայ եղանակներով։ Հակառակ ամսամուտերի ու բնականաբար՝ նաեւ տարեմուտի շարժական լինելուն, այս օրացոյցում կիրառուել է գլխաւոր տօնի օրը ամէն տարի գլխաւոր պաշտոռող էակի երկնային կերպարի՝ Հայկն (Orion) համաստեղութեան գլխաւոր աստղի (α Orionis, Betelgeuse) արեգակնային ամբարձման (առաջին առաւօտեան ծագման) դիտումով որոշելու կարգը։

Հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ իր այսպիսի կառուցքածքով Հայոց օրացոյցը գալիս է ն.թ. 24րդ դարից, երբ ն.թ. 2341 այն ստեղծուել է ի հետեւանք օրացուցային լուրջ բարեփոխութեան<sup>8</sup>։

Գալով Հայկական օրացոյցի առաւել հին ժամանակների վիճակին, մենք գիտենք, որ ն.թ. 2341 առաջ կիրառուած է եղել այսպէս կոչուած՝ Նախահայկեան օրացոյցը։ Սա պայմանական անունն է այն օրացոյցի, որը Հայաստանում կիրառուել է Հայկեան օրացոյցից առաջ (մինչեւ ն.թ. 2341)։ Այս օրացոյցը բնոյթով աստեղա-արեգակնային է։ Այստեղ տարի է համարուել միայն այն տեւողութիւնը, որի ընթացքում հնարաւոր է եղել երկնքում դիտել գլխաւոր պաշտոռող էակի երկնային կերպարը՝ Հայկն (Orion) համաստեղութեան գլխաւոր աստղը (α Orionis, Betelgeuse)։ Հայաստանի պայմաններում սա տեւել է շուրջ 300 օր։ Մնացեալ (շուրջ 70օրեայ) տեւողութիւնը, որի ընթացքում այս աստղը Հայաստանից դիտելի չի եղել, համարուել է արտատարեկան, եղել է արգելքների շրջան եւ նախորդել է Ամանորին, որ տօնուել է այդ աստղի արեգակնային ամբարձման (առաջին առաւօտեան ծագման) օրը՝ ամառնամուտից մէկ շաբաթ առաջ<sup>9</sup>։ Սա եղել է տեղի եղանակային պայմաններին ու երկրագործական մշակոյթին լաւագոյնս ներդաշնակող օրացոյց։

8 ԲԲՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Հայոց Բունքուական, ի էջմիածին, 1985, Ա., 51-57, և Բ-Գ, 72-80, նաև՝ նոյն, Օրացոյց Հայոց, Աշխարհ, 211-246։

9 նոյն, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին։ Նախահայկեան օրացոյցի կառուցուածքը, ի էջմիածին, 1995, Ժ-ԺԲ, 130-153, նաև՝ նոյն, Օրացոյց Հայոց, 385-430։

**Այս՝ Նախահայկեան օրացոյցի գոյութիւնն էլ Հայաստանում վկայուած է մի քանի անկախ աղբիւրներով։ Նախ սրա գոյութեան հետքերը մնացել են Հայկական միջնադարեան տոմարական, պատմական եւ այլ աղբիւրներում։ Բացի այդ, այս օրացոյցի գոյութիւնը վկայուած է նաեւ Հայկական բանահիւսութեան մէջ, Հայոց հարեւան ազգերի մշակոյթներում եւ, ի վերջոյ, առկայ է Հայաստանից գտնուած հնագիտական գտածոյ ն.թ. 32րդ դարից, որ վկայում է այս օրացոյցի կիրառութիւնը Հայաստանում գոնէ վաղ բրոնզի դարի սկզբում<sup>10</sup>։**

**Այսպէս, ունենք, որ սկսած գոնէ ն.թ. Դ. հազարամեակից, Հայոց օրացոյցում կիրառուել է ու Orionis աստղի դիտումներով օրացոյցը կարգաւորելու կարգը։ Սակայն սա միակ երկնային լուսատուն չէ, որի դիտումները կիրառուել են Հայոց օրացոյցում։ Անշուշտ, խօսքը Արեգակի եւ Լուսնի մասին չէ։ Արեգակն ու Լուսինը յատուկ ուշադրութեան առարկայ են եղել մեզ յայտնի բոլոր ազգերի մշակոյթներում, եւ դրանց դիտումները բացարիկ տեղ են ունեցել բոլոր հնագոյն մշակոյթներում։ Խօսքը մնացեալ 5 մոլորակների<sup>11</sup> եւ որոշ պայծառ աստղերի մասին է։**

10 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայկակամ հնագոյն օրացուցային պատկերացումները եւ վասի Դիգենիս Ակրիտասի մասին բիւզանտիական դիցավէպը, ի Բագմավէպ, 2004, 5-16, նոյն, Հայկակամ հնագոյն օրացուցային պատկերացումները ըստ Ա.թ. 28-27րդ դարի Քրելամի զարդապատկերի վերլուծութեան, ի Բագմավէպ, 2007, 149-163 (այս յօդուածի լոյս ընծայումից յետոյ հրատարակուել են խնդրոյ առարկայ հնագիտական գտածոյի ժամանակը նշուող նիւթեր, ըստ որոնց՝ այդ Քրելամը Ա.թ. 32րդ դարի է)։ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ. - ԽԱԶԱՏՐԵԱՆ, Ա., Օրոշ ժամանակային առնչութիւններ Աստուածաշնչում, ի Բագմավէպ, 2008, 83-100։ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրոշ օրացուցային իրողորոխները հայկակամ հրաշապատում հելենարներում. Ա., Բ., Գ, ի էջսիածին, 2008, Բ, 49-70. 2009, ԺԲ, 62-83։

11 Հնում անգէն աչքով տեսանելի մոլորակներ են համարուել Արեգակը, Լուսինը, Արուսեակը, Հրատը, Փայլածուն, Լուսնթագն ու նրեւակը։ Ընդհանրապէս, իմ աշխարհում (ի մասնաւորի՝ իմ Հայաստանում) երկներում երեւացող բոլոր լուսատուները համարուել են աստղեր։ Իսկ այդ աստղերից երանե, որոնք չունեն մշտական տեղ, այլ «մոլորուած» դեգերում են խաւարածիք ամբող երկայնքով, համարուել են «մոլորուած աստղեր», եւ այս պատկերացումից ել ծագել է «աստեղ մոլորական» - «մոլորակ» եղրը՝ իրեւ մշտական տեղ չունեցող երկնային լուսատուների ընդհանուր անուն։ Նոյն կերպ ել գիսաւորները կոչուել են «գիսաւոր»

**Տարբեր երկնային լուսատուների դիտումները Հայաստանում հնում կիրառուած լինելու մասին կան զանազան ուղղակի եւ անուղղակի վկայութիւններ հայկական բանահիւսական, ագդագրական եւ տոմարական աղբիւրներում։ Այստեղ քննութեան առնենք դրանցից մէկը։ Շատ են տուեալները Բոյլք<sup>12</sup> (*Pleiades*) աստղոյթի դիտումների մասին։ Կան նաեւ տարբեր վկայութիւններ այլ աստղերի եւ որոշ մոլորակների դիտումների մասին։ Արդ քննենք միայն Բոյլքի դիտումների հարցը։**

Հայկական միջնադարեան տոմարական աղբիւրներում պահպանուել են Հայկն համաստեղութիւնից մի փոքր հիւսիս-արեւմուտք գտնուող Բոյլք աստղոյթի արեգակնային անկումն ու ամբարձումը դիտելու հետքերը ի դէմս «անկաստեղ» եւ «Ելաւտեղ» եղբերի եւ դրանց համապատասխանող ամիս-ամսաթուերի։ Հայոց միջնադարեան տոմարական պատճէններում սրանց համար պահպանուած բանաձեւերից հետեւում է, որ անկաստեղը լինում է Ապրիլի 14ին, իսկ Ելաւտեղը՝ Մայիսի 24ին<sup>13</sup>։ Ցովհաննէս Սարկաւագի «Խառնախորանում» էլ հէնց Ապրիլի 14ի դիմաց նշուած է «Անկաստեղ», իսկ Մայիսի 24ի դիմաց էլ՝ «Ելաւ-

աստղ», «վարսաւոր աստղ», «Յիզակաւոր աստղ» եւ այլ անուններով՝ հիմնականում կախուած դրանց արտաքին տեսքից։

12 Բոյլքը ը քաց աստղակյուտ է Արեգակից 125 պարսեկ (մօտ 400 լուսատարի) հեռաւորութեան վրայ։ Անգէն աչքով երեւում է իբրեւ իրար մօտիկ դասաւորուած 6-7 աստղերի խումբ Յուլ կենդանակերպի մէջ։ Տարբեր դիշարանութիւնների մէջ սա կապուած է եղել 7 իգական կերպարների (7 քյոյերի) հետ, որոնք սերտ առնցութիւն ունեն Հայկն համաստեղութեան եւ դրա յունական կերպարի՝ Օրիոնի հետ։ Յայտնի է, որ ինչ որ ժամանակ (օրինակ՝ Արատոս Սոլացու «Երեւոյթեր» երկում, Ա.Ք. Դ.-Գ. դարեր) Բոյլքը համարուել է Յոյժիսկ առանձին համաստեղութիւն կենդանաշշանի համակարգում։ Հայկական միջնադարեան գրաւոր տիւրներում սա կոչուած է Բազմաստեղ, կամ Բազմաստեղի, իսկ ժողովրդական լեզուով այն կոչուել է Բոյլք։

13 Յովհաննէս Սարկաւագի «Պատճէն տոմարի» երկում սրանց համար տըրուած է։ «Զամեկաստեղն այսպէս արա. կալ զնալիյածն, Ը(8) ի վերայ ած, տուր մարերի ամսոյ, զաւելիսն հան, ուր թիւն յանձի, ամդ է։ Դարձեալ կալ զնահանձն, ԺԸ(18) ի վերայ թեր, տուր մարգաց ամսոյ, զաւելիսն հան, ուր սպառի թիւն, ամդ է ելաստեղն» (ՅՈՎՀԱՆՆՆԵՍԻ Ի-ՄԱՍԱՍԱՍԻ, Մատենագրութիւն, ԱԲՐԱՀԱՄՄԵՍԱՆ, Ա., (աշխ.), Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան 1956, 207):

տեղ»<sup>14</sup>: Եւ այս ամսաթուերն էլ շատ լաւ համընկնում են Բոյլքի վերջին երեկոյեան մայրամուտի (արեգակնային անկման) եւ առաջին առաւօտեան ծագման (արեգակնային ամբարձման) ժամանակներին։ Այս կապակցութեամբ հարկ է նկատել, որ քրիստոնէական կրօնի տօնացոյցը եւ դրա հետ կապուած՝ նաեւ օրացոյցը որեւէ կարիք չունեն նման աստղագիտական դիտումների։ Քրիստոնէական տօնացոյցի միակ աստղագիտական «պահանջը» գարնանամուտի եւ առաջին գարնանային լիալուսնի ճշգրիտ ժամանակներն իմանալն է։ Ուրեմն, Բոյլքի ծագման եւ անկման ժամանակները նշանակող «ելաստեղ» եւ «անկաստեղ» եզրերը պիտի ունենան ոչ-քրիստոնէական ծագում։ Հայկական օրացոյցում դրանք պիտի լինեն կամ նախաքրիստոնէական ժամանակներից մնացած եւ կամ մի այլ օտար օրացոյցից փոխառեալ իրողութիւն։

Ժամանակին ես ինքս ենթադրութիւն էի արել, թէ Բոյլքի դիտումներին վերաբերող «անկաստեղ» եւ «ելաստեղ» եզրերը հայկական տոմարում կարող են լինել օտարամուտ, այսինքն՝ փոխառութիւն մի այլ (հաւանաբար՝ յունական) օրացոյցից<sup>15</sup>։ Սակայն ներկայումս առկայ տուեալները հիմք են տալիս համարելու, որ այս եզրերը ոչ թէ փոխառութիւն են դրսից, այլ գլուրանք վերապրուկներն են Հայաստանում հնագոյն ժամանակներում կիրառուած՝ Բոյլքի դիտումների։

14 ՅՈՎԱՆՆԻԿՍ ԽՄԱՍՏԱՍԵՐ, Մատենագրութիւն, նշ. աշխ., 165-169։ Ի դեպ, Յովհաննես Սարկաւագի անունով մեզ հասած «Խառնախորանը» ընդամենը խմբագրութիւնն է Անաթիա Շիրակունու կազմած Խառնախորանի, որ մասն է եղել նրա ընդարձակ «Տոմարի»։ Սարկաւագը Անաթիայի Խառնախորանի մեջ ներմուծել է իր ստեղծած հայկական անշարժ ամսաթուերով օրացոյցը՝ «Ճայոց Սարկաւագին» վերտառութեամբ եւ դրա հետ կապուած որոշ մանրամասներ, ինչպէս՝ նահանջի օրուայ դիրքը, տարեմուտը՝ «Տարեմուտ Ճայոց Սարկաւագին» անունով եւ այլն։ Ըստ այսմ, բնական է, որ Սարկաւագի խմբագրած Խառնախորանում առկայ «անկաստեղ» ու «ելաստեղ» եզրերը եղած լինեն նաեւ Անաթիայի կագմած Խառնախորանում։ Այսինքն, կարող ենք այս եզրերի ակունքը համարել ոչ թէ Սարկաւագի Խառնախորանը եւ տոմարական Պատմենը, այլ հենց Անաթիայի Տոմարը եւ դրա մասը հանդիսացած Խառնախորանը։

15 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Հայոց օրացոյցն ու երկնային լուսատութերը, ի եղմածին, 1995, Ա., 46-60։



ւոր է, որ այդ հնարաւոր «թեկնածուների» ցուցակում առկայ էր նաև *Բոյլքը* (*Pleiades*)<sup>18</sup>:

*Մեծամօրից Բոյլքի դիտումներ կատարուած լինելու թէ՛ կողմ եւ թէ՛ գէմ կան մի քանի հանգամանքներ:* Նայենք հերթով:

*Մեծամօրից Բոյլքը դիտուած լինելու օդտին է առաջին հերթին այն, որ եթէ ժայռագիր պատկերի մէջտեղով անցնող գիծը համարենք դիտման ուղղութեան ցուցիչ, ապա այդ նշ-չուած ուղղութեամբ, իրօք, հնարաւոր է եղել Բոյլքի ծագումը դիտել ն.թ. 9000 թուականին:*



Նկար 3.


Բոյլքը այնպէս, ինչպէս երեւում է աստղադիտակով

Երկրորդը սրա օդտին է նաև այն, որ ժայռագիր նկարը մեծապէս նման է հէնց Բոյլքի աստղերի դասաւորութեանը այնպէս, ինչպէս դրանք երեւում են անզէն աչքով (կամ փոքր աստղադիտակով) դիտողին (Նկար 3): Իրականում Բոյլքում առկայ են 6-7 աստղեր, որ մատչելի են անզէն աչքով դիտողին<sup>19</sup>: Սակայն դրանցից համեմատաբար պայծառ են 4ը, որոնք եւ երկն-

18 ԲՐՈՒԹԵԱՆ, Գ., *Օրացոյց Հայոց*, 62. աշխ., 168-171:

19 Անզէն աչքով դիտելի աստղերի քանակը կախուած է դիտողի աչքի սրատեսութիւնից ու դիտման պայմաններից (օդի թափանցիկութիւնից, մըրճութիւնից կամ անութիւնից, դիտման ուղղութեամբ լոյսի այլ աղքիւնների առկայութիւնից եւ այլութիւններից):

քում գոյացնում են «սեղանակերպ» մի պատկեր: Եւ այդ պատկերն էլ չառ նման է Մեծամօրի մեր խնդրոյ առարկայ պատկերին: Մեծամօրի ժայռագրի վրայ էլ ունենք հաւասարասրուն սեղանի պատկեր եւ այդ սեղանի մէջ չորս աստղապատկեր: Աւելին. եթէ ի նկատի ունենանք, թէ ի՞նչ դասաւորութեամբ են երեւում Բոյլքի աստղերը արեւելեան հորիզոնին՝ ծագման պահին, ապա կը ստանանք մի պատկեր, որ չառ աւելի է նման մեր խնդրոյ առարկայ ժայռագրին նկարին (նկար 4):



Նկար 4.

Բոյլքի աստղերը այնպէս, ինչպէս երեւում  
են հորիզոնին՝ ծագման պահին

Այս նկարի վրայ, եթէ զանց առնենք վերեւի երկու եւ ներքեւի երկու աստղերը, որոնք պայծառութեամբ զիջում են միւս աստղերին, ապա մնացեալ 4 աստղերով գոյացած պատկերը չառ աստղերին, ապա մեր ժայռագրին նկարի վրայ եղածին: Իսկ համենան կը լինի մեր ժայռագրին նկարի վրայ հաշուի չառնելու իրաւունք մենք վըսմատաբար թոյլ աստղերը հաշուի չառնելու իրաւունք մենք վըսմատաբար ունենք, քանի որ ծագման պահին, երբ աստղակոյտը տաճաբար ունենք, զանց միացնեան պայծառութեամբ զիջում աստղերի հորիզոնի վրայ է, վաստիտելիութեան պատճառով թոյլ աստղերը չեն երեւում, մնում են միայն պայծառները: Այսինքն, կարող ըստ չեն երեւում, մնում են միայն պայծառները: Այսինքն, կարող ենք համարել, որ Մեծամօրի խնդրոյ առարկայ ժայռագրին նկարի վրայ պատկերուած է հինգ Բոյլք աստղով այն տեսքով, ինչ վրայ պատկերուած է արեւելեան հորիզոնի վրայ՝ ծագման պահին: Այս դա երեւում է արեւելեան հորիզոնի վրայ՝ ծագման պահին:

Երբորդ հանգամանքը՝ յօդուած Մեծամօրից Բոյլքի դիերը հանգամանքը՝ համարուած է: Շատ քիչ հաւասարական է եւ նոյնիսկ՝ տումների հետեւեալն է: Շատ քիչ հաւասարական է եւ նոյնիսկ՝ անտրամաբանական, որ մէկ աստղի (կամ մոլորակի) դիտման անդրուածքը լուսական է: Եթէ լուսական աստղի վրայ քանդապահ զոր է, ապա աստղերի վաղացած պատկերը կամ ամառը մասնաւունք է, ապա աստղերի վաղացած պատկերը կամ ամառը մասնաւունք է:

որ խնդրոյ առարկայ ժայռագիր նշանը երկնային լուսատու է պատկերում, ապա այդ լուսատուն չի կարող մէկ աստղ կամ մոլորակ լինել: Պատկերի մէջ աստղանշանների բազմակիութիւնը (4 հատ լինելը) յստակ ցուցում է այն մասին, որ այդ պատկերը կարող էր նշանակել միայն մի քանի աստղերից բաղկացած կազմութիւն: Եւ սա էլ նշանակում է, որ խօսքը պիտի վերաբերի միայն անգէն աչքով երեւացող աստղակյուներին: Երկրից անգէն աչքով դիտողին մատչելի են միայն երեք բաց աստղակյուներ, որ են Բոյլքը (Pleiades, M 45), Մսուրը (Praesepē, M 44), եւ Հիադները (Hyades): Այս երեքից Մսուրը անգէն աչքով երեւում է իբրև հազիւ նշմարելի պղտոր մշուշոտ բիծ Խեցքետին կենդանակերպի կենտրոնում: Առանց աստղադիտակի սա հնարաւոր չէ նոյնիսկ ընկալել իբրև աստղ կամ աստղերի խումբ: Այնպէս որ չի կարող խօսք լինել Մսուրը աստղապատկերով (առաւել եւս՝ 4 աստղապատկերներով) նշանակելու մասին: Գալով Հիադներին, սա էլ Յուլ կենդանակերպի մէջ լատինական V տառի ձեւով դասաւորուած 6 բաւական պայծառ աստղերի խումբ է Ալդեբարան (α Tauri) աստղի շուրջ, որ լինելով շատ մօտ (47 պարսեկ կամ 153 լուսատարի հեռաւորութեան վրայ) գտնուող աստղակյուն, երեւում է մեծ տարածքի վրայ ցրուած, եւ ոչ մի կերպ նման չէ մեր խնդրոյ առարկայ ժայռագիր պատկերին:

Ինչ վերաբերում է Բոյլքին, սա էլ, ինչպէս վերը նշուեց, անգէն աչքով երեւացող 6-7 թոյլ աստղերի մի խումբ է, որոնցից առաւել պայծառաները հէնց չորսն են եւ ծագման պահին հորիզոնի վրայ երեւում են հէնց այն տեսքով, ինչպէս Մեծամօրի ժարագիր նկարում պատկերուած աստղերի խումբն է: Բոյլքի պարագայում անտրամաբանական պիտի լինէր հակառակը. քանի որ Բոյլքը (այնպէս, ինչպէս դա երեւում է անգէն աչքով դիտողին) մի քանի աստղերից բաղկացած աստղախումբ է (եւ դրա զրաբար անունն էլ Բազմաստեղ, հէնց նոյնն է նշանակում), ուստի բնական է, որ դրա պատկերն էլ լինէր դարձեալ մի քանի աստղերի պատկերներից բաղկացած համակցութիւն, այսինքն՝ հէնց այն, ինչ ունենք Մեծամօրի ժայռի պատկերի վրայ: Մտացնում է, որ պատկերագրական առումով մեր խնդրոյ առարկայ ժայռափորագրութիւնը լաւագոյնս համապատասխանում է Բոյլքի պատկերին:

Այսինքն, կարող ենք կստահ լինել, որ Մեծամօրի Փոքր բլրի հարթակի վրայ փորագրուած ժարագիր նկարը շատ մեծ հաւանականութեամբ պատկերում է հէնց Բոյլքը այն տեսքով, ինչպէս այն երեւում է ծագման պահին հորիզոնի վրայ:

**Միակ «անպատեհութիւնը»՝ խնդրոյ առարկայ պատկերը Բոյլքի հետ նոյնացնելու հարցում ժամանակն է:** Ինչպէս նշուել է վերը վկայաբերուած աշխատութեան մէջ, Մեծամօրից՝ նշուած ուղղութեամբ Բոյլքի ծագումը դիտելի պիտի լինէր ն.թ. 9000 թուականին: Սա շատ մեծ վաղեմութիւն է:

**Եւ այսպիսի թուականին դէմ են, հիմնականում, հնագիտութեան տուեալները:**

**Ամենածանրագլխուը այն է, որ ըստ հնագիտական հետազոտութիւնների չունենք ոչ մի տուեալ, որ հաստատի այդքան վաղ անցեալի մշակութային շերտի գոյութիւնը Մեծամօր հնավայրի տարածքում:** Աւելին, պեղումներով մեզ յայտնի դարձած հնագիտական ամենավաղ շերտերը էապէս նոր են ն.թ. 9000 թուականից: Այսօր հնագիտական տուեալները Մեծամօրի պեղուած տարածքների ամենահին մշակութային շերտերը թուագրում են վաղ բրոնզի դարով<sup>20</sup>: Սակայն այս առարկութիւնը յաղթահարելի է:

**Բանն այն է, որ բնաւ պարտադիր չէ որ Փոքր թրի հարթակները եւ դրանց վերնամասում արուած ժայռագիր պատկերը լինեն հնավայրի յայտնի միւս մշակութային շերտերի հետ համաժամանական:** Ժայռագիրը նկարը կարող էր լինել ինչպէս պեղուած հնավայրին ժամանակակից, այնպէս էլ՝ դրանից էապէս աւելի համաժամանականայ: Փոքր բլրի հարթակի ժայռագիրը պատկերը կարող էր արուած լինել եւ հնավայրի այլ շինութիւնների հետ համաժամանակ, եւ էլ շատ աւելի վաղ, քան դրանց ժամանակն է:

**Ի հաստատումն այսպիսի հնարաւորութեան նշենք, որ այսօր շայաստանում յայտնի են բազմաթիւ ժայռապատկերներ, վիշապակոթողներ, մենաքարեր եւ հնագոյն անցեալի մշակոյթի այլ կոթողներ, որոնք անմիջականօրիէն կապուած չեն որեւէ բնակավայրի հետ<sup>21</sup>:** Իրենց ստեղծման ժամանակներում դրանք պէտք է եղած լինեն բնակավայրերից մեկուսի առանձին յուշարձաններ: Այդպէս էլ կարող էր լինել նաեւ Մեծամօրի Փոքր բլրի ժայռապատկերներ:

20 ԽԱՆՁԱՐԴԵՍԱՆ, Է. Վ. - ՄԿՐՏՉԵՍԱՆ, Կ. Հ. - ՊԱՐՍԱՄԵՍԱՆ, Է. Ս., ՄԵծամօր, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երևան 1973, 13:

21 Այս նոյնը վերաբերում է նաև Միսիանից Յլմ հեռաւորութեան վրայ գտնուող յայտնի Զօրաց քարեր յուշարձաններին: Սա եւս կապուած չէ ոգութողներ, որոնք անմիջականօրիէն կապուած չեն որեւէ բնակավայրը ներկայիս Միքուէ բնակավայրի հետ: Միքուէնու ժամանակ յայտնի է, որ այս հետագյն կասիսի բաղադրի է: Միքուէնու ժամանակ յայտնի է, որ այս հետագյն կասիսի բաղադրի է: Վիշապների պատկանական լիքառութիւն եւ դրան զուգահեռ ունեցել է պաշտամունքային լիքառութիւն ու դրան զուգահեռ՝ այստեղ կատարուել են երկնային լուսատուների դիտումներ:

կերտ յուշարձանը իր հարթակներով ու ժայռագիր պատկերներով։ Դա կարող էր լինել բնակավայրերից դուրս մեկուսի վայրում ստեղծուած պաշտամունքային շինութիւն՝ ժայռի վրայ փորուած հարթակների եւ յատուկ նշանակութեան պատկերների տեսքով։

Մեծամօրում այսօր պեղուած հնավայրի տարածքում շատ են պաշտամունքային շինութիւնները<sup>22</sup>։ Այսինքն՝ բոլոր հիմֆերը կան պնդելու, որ Մեծամօրի Մեծ եւ Փոքր բլուրները հնում իրենց այլ գործառոյթներից զատ եղել են նաև սրբավայրեր։ Սլորա հետ մէկտեղ գիտենք նաև, որ կարեւոր պաշտամունքային վայրերը կառուցապատում են շատ երկար ժամանակի ընթացքում, ընդ որում՝ այդ կառուցապատումը յաճախ շարունակում է իրար յաջորդած տարբեր կրօնների պայմաններում։ Սրա ակնառու օրինակ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որի Մայր եկեղեցին հիմնադրուել է Դ. դարի սկզբում՝ նոյն վայրում նախապէս եղած Մանդարամետի մէհեանի տեղում, վերակառուցուել է Եղարում եւ մինչեւ Ի. դարը այնտեղ շարունակուել են կառուցումներն ու վերակառուցումները. այսօր էլ ԻԱ. դարում Մայրավանքի տարածքի կառուցապատումն ու վերակառուցումը շարունակում են. աւելացում են նոր շինութիւններ, վերակառուցում են եղածները, կատարում են տարածքի տարբեր հատուածների պեղումներ, բացում, ի յայտ են գալիս մշակութային հին շերտեր։ Մայր տաճարի տարածքում պեղումներով յայտնաբերուած է Վանի թագաւորութեան շրջանի քարէ կոթող հէնց եկեղեցու աւագ խորանի տակ, որ ներկայումս կարելի է տեսնել վանքի բակում, իր յայտնաբերման վայրից փոքր-ինչ դէպի արեւմուտք տեղաշարժուած։ Աւելին. Մայր տաճարի աւագ խորանի տակ գտնուած Վանի թագաւորութեան շրջանի քարէ կոթողի վրայ էլ գտնուել է աւելի ուշ ժամանակուայ կրակարան<sup>23</sup>։ Այսինքն՝ այստեղ ունենք օրինակ, թէ ինչպէս միեւնոյն կէտում իրար վրայ յաջորդաբար տեղակայուել են իրար յաջորդած երեք կրօնների սրբարանները<sup>24</sup>։ Այսպէս, մենք ունենք օրի-

22 ԽԱՆՁԱԴԵԱՆ, Է. Վ. – ՄԿՐՏՉԵԱՆ, Կ. Հ. – ՊԱՐՍԱՄԵԱՆ, Է. Ս., Մեծամօր, ՀՍՍՀ ԳԱ իրատ., Երեւան 1973, 149-165:

23 ՀԱՄԲԱՐԵԱՆ, Մ., Վազգէն Ա. Ամենային Հայոց կարողիկոսի վերանորոգ-չակամեկեղեցաշինական գործութեալութիւնը, ի էջմիածին, 2008, Ժ, 49-54:

24 Հայաստանում շատ տարածուած իրողութիւն է Վանի թագաւորութեան շրջանի արանագրութիւն ունեցող կամ չունեցող կորողները քիչստոնելական եկեղեցիների տեղերում կամ դրանց մէջ գտնուելը։ Այս երեւոյը



**ՄԵԾԱՄԾՈՐԻ ՄՊԱՐԱԾՔԸ պէտք է եղած լինէր կղզի, կամ թերակղզի (բնականաբար՝ նախապէս հէնց կղզի եւ ապա միայն՝ թերակղզի) դանդաղ ցամաքող ծովի մէջ:**

Փաստօրէն, Բոյլքի դիտումը մեզ տանում է այն ժամանակ-ները, երբ հնագոյն Արարատեան ծովը (լիճը) հիմնականում նահանջել էր եւ ջրից ազատուել էին մեծ մակերեսներ: ՄԵԾԱՄԾՈՐԻ ՓՈՔՐ ԲԱՐԻ ՀԱՐԹԱԿԱՆԵՐՆ ԷԼ ԻՐԵՆԾ ԺԱՅՌԱՊԻՐ պատկերով պիտի եղած լինէին կղզու վրայ կառուցուած ժայռակերտ սրբավայրի տարրեր: Այնպէս որ ժամանակի բերած աշխարհագրական վիճակը եւս խոչընդուած չէ՝ Բոյլքի դիտումները ՄԵԾԱՄԾՈՐԻ տարածքից ն.թ. 9000ին հնարաւոր համարելուն: Աւելին. ինչպէս յայտնի է, Հայաստանի մեծ լճերի բոլոր բնակելի կղզիների վրայ էլ միջնադարում եղել են սրբավայրեր-վանքեր: Քաջ յայտնի են ՍԵԼՎԱՆԱՅ վանքը ԳԵՂԱՄԱԼ լճի ՍԵԼՎԱՆ կղզում, Աղթամարի Ս. ԽԱՀ ԵԿԵՂԵՑԻՆ, ԱՐՄԵՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԺԱՃԻՆ վանքը, Կառւց եւ Լիմ վանքերը Վանայ լճի համանուն կղզիների վրայ: Անշուշտ, սրանք բոլորն էլ քրիստոնէական սրբավայրեր են: Սակայն հարկ է ի նկատի ունենալ այն յայտնի իրողութիւնը, որ սրբավայրերը ապրում են շատ աւելի երկար, քան կրօնները եւ փոխանցուում են կրօնից կրօն: Ուրեմն, մեծ հիմքեր ունենք համարելու, որ այս թուարկուած բոլոր քրիստոնէական սրբավայրերն էլ ժառանգները պիտի լինեն այդ նոյն վայրերում (կղզիներում) քրիստոնէութիւնից առաջ եղած հնագոյն սրբավայրերի: Այս ամէնին իբրեւ լրացում նկատենք նաեւ, որ վերոնշեալ հնագոյն Արարատեան ծովի հիմնական մեծ կղզիների տեղերում այսօր մեզ յայտնի են հնագոյն սրբավայրեր-բնակավայրեր: Դրանցից պատմական Արտաշատի բլուրներից մէկի վրայ գտնուող Խոր վիրապը սրբավայր է մինչեւ այսօր: ՄԵԾԱՄԾՈՐԻ հնագոյն սրբավայրի մասին վերն արդէն խօսուեց, իսկ Արմաւիրի հնագոյն սրբավայրերի մասին ունենք տակաւին ՄՊՎՀ Խորենացու վկայութիւնները<sup>27</sup>: Այսինքն, առկայ տուեալները հիմք են տալիս եղանակացնելու, որ Հայաստանում կղզիները եղել են պաշտամունքի հետ սերտօրէն կապուած վայրեր: Դրանց վրայ մեզ յայտնի բոլոր գէպքերում եղել են սրբավայրեր: Եւ այս իրողութիւնը դիտում է՝ սկսեալ պլէյասոպկենի վերջ - հոլոկենի սկիզբ ժամանակային սահմանից (ն.թ. Ժ.-Լ. Հոյ):

27 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, գիրք Ա., գլ. Ի., գիրք Բ., գլ. Ը., ԺԲ.:

Այս կապակցութեամբ տեղին է յիշել նաեւ շումերական գիլգամշին, որ անմահութեան միջոցը որոնելով, հասաւ Դիլմուն կղզին, ուր ապրում էր Ջրհեղեղից փրկուած եւ անմահութեան արժանացած Ուտնապիշտիմբը: Աւելին, այս Դիլմուն կղզին Շումերների պատկերացմամբ նաեւ մարդկութեան ծագման վայրն է: Այսինքն, Շումերները սրբավայր են համարել այդ Դիլմուն կղզին: Մի կողմ թողնելով այս Դիլմուն կղզու տեղադրութեան հարցը<sup>28</sup>, նշենք մեր խնդրի համար կարեւորը՝ որ այս պարագայում եւս ունենք յոյժ կարեւոր սրբավայրը կղզու վրայ լինելու իրողութիւնը:

Կղզու սրբավայր լինելը կապւում է նախագոյ ջրային տարերքի մէջ առաջին ցամաքը յայտնուելու, «ապրելու տեղ», «ոսք դնելու տեղ» գոյանալու գաղափարի հետ: Ընդհանրապէս, մեզ յայտնի հնագոյն դիցաբանութիւններում կղզին ունի յոյժ կարեւոր դեր աշխարհաստեղծման գործընթացում: Յիշենք թէկուզ այն, որ բազմաթիւ հնագոյն պատկերացումների համաձայն աշխարհը (յատկապէս՝ նախաստեղծ աշխարհը) ինքը բոլոր կողմերից շրջապատուած է ջրերով (առաջնում է նախագոյ ջրերի մէջ), այսինքն՝ ըստ էութեան հնաց կղզի է<sup>29</sup>: Սրան է յարում նաեւ հին եգիպտական պատկերացումը աշխարհի ստեղծման մասին: Այստեղ նախագոյ քասու-ծովից (նուն) յառաջնում է Ատուում՝ առաջին աստուածը: Նա ամուր տեղ է որոնում (կանգնելու համար) եւ ոչինչ չի գտնում նունի համատարած ջրից բացի: Եւ ստեղծում է Բեն Բեն Բլուրը<sup>30</sup>: Այս Բեն Բեն Բլուրը (Բենու ցից քարը) եւս, փաստօրէն, կղզի է: Այսինքն, ի դէմս կղզու մենք ունենք աշխարհաստեղծման ամենանախնական փուլի

28 Ներկայում շատ տարածուած է այս Դիլմուն կղզին Պարսից ծոցում ներկայական բակրէյն կղզու հետ նոյնացնելու մօսեցումը: Սակայն շումենուող բակրէյն կղզու ալրիւթերի տուեալները այդպիսի նոյնացման համար բաւարար հիմք չեն տալիս: Աւելիին. այդ տուեալները ցուցանում են, որ Դիլմունը հարկ է նոյնացնել Վանայ լեռու գտնուող ներկային կղզիները մէկի (Կառուցի, Լիմի, կամ Արտերի) եւ կամ հեռում եղած մի այլ րից մէկի (Կառուցի, Լիմի, կամ Արտերի) եւ կամ հեռում եղած մի այլ կղզու հետ: Ընդհանրապէս, այս խնդիրը շատ ծաւալուն է: Սակայն դա դուրս է այս բնեութեան նիւթից, եւ դրան այստեղ չենք անդադանայ:

29 Տե՛ս, օրինակ, Միֆы народов мира, т. 2, “Советская Энциклопедия”, Москва 1992, 249:

30 Այս Բենքենը համարում է նաև նախագոյ ջրից դուրս ցցուած ցից քար, որի վրայ էլ գտնում է ձկնկուլի տեսքով թենու աստուածը. տե՛ս Միֆы народов мира, т. 1, “Советская Энциклопедия”, Москва 1991, 124, 168.

կարեւորագոյն իրողութիւն, որից եւ սկսւում է մարդու բնակութեան համար պիտանի ցամաքը: Հստ այսմ լիովին հասկանալի է կղզիների սրբացուած լինելը եւ դրանց վրայ հնագոյն սրբավայրերի առկայութիւնը հնագոյն Հայաստանում:

Ցաւօք, այսօր ոչինչ յայտնի չէ Վանայ լճի կղզիներում եղած քրիստոնէական սրբավայրերի տեղերում (կամ դրանց մօտ) այլ՝ նախաքրիստոնէական սրբավայրերի առկայութեան մասին. չեն արուած համապատասխան հնագիտական հետազոտութիւններ: Սակայն ժողովրդական աւանդութիւններն այդ մասին որոշ տեղեկութիւն պահել են: Սեւանայ կղզու մասին տեղեկութիւններ են հասել, թէ դրա բարձրագիր մասում նախապէս եղել է նախաքրիստոնէական տաճար, որի տեղում Ս. Գրիգոր Լուսաւորիչը հիմնել է Ս. Ցարութեան եկեղեցին, որի հարեւանութեամբ էլ յետագայում կառուցուել է Ս. Կարապետ եկեղեցին<sup>31</sup>:

Կարեւոր է պատասխանել նաև այն հարցին, թէ ինչո՞ւ, ի՞նչ նպատակով պիտի կատարուէին Բոյլքի դիտումները:

Բնականաբար, այդ հնագոյն ժամանակներում աստղերի (դըրանց ծագման ու մայրամուտի) զիտումները ինքնանպատակ չէին կարող լինել: Դրանք կարող էին ունենալ երկու հնարաւոր պատճառ: Կամ դրանք պիտի կատարուէին զուտ կրօնական նկատառումներով, իբրև այնինչ կամ այնինչ պաշտուող էակի երկնային կերպարի վարքի դիտում-բացայացում: Եւ կամ դրանք պիտի կատարուէին զուտ կիրառական նպատակով՝ տարրուայ մէջ ինչ-որ կարեւոր ժամանակներ գտնելու, սեւեռելու համար: Անշուշտ, կարող էր լինել այս երկու հնարաւոր տարբերակների համատեղումը եւս: Այսինքն, հնարաւոր է, որ ինչ-որ պաշտուող էակի (նրա երկնային կերպարի) վարքին հետեւելու հետ մէկտեղ, կամ հէնց դրա միջոցով որոշուէին ինչ-ինչ նպատակների համար էական կարեւորութիւն ունեցող ժամանակների որոշում-սեւեռումը համապատասխան լուսատուի դիտումների միջոցով:

Այս կապակցութեամբ յիշենք, որ, ինչպէս վերը նշուեց, Բոյլքը Հայովի կերպարի հետ սերտօրէն կապուած բազմակի կեր-

31 Այս մասին տե՛ս, օրինակ, ՍՄԲԱՏԵԱՆՅ, Մ., Տեղագիր Գեղարքունիք Ծովագարդ գաւառի, որ այժմ՝ Նորբայազիդ գաւառ: Ի 1862 քուէն ց1895 թիւմ, Մայլ Աբոն Ս. Էջմիածին, Վաղարշապատ 1895, 110: Նաև՝ Կիւ-ՄոլուշԽԱՆԵՑԻ, Մ., Պատմութիւն անցից Սեւանայ վանուց, Մայր Աբոն Ս. Էջմիածին, Վաղարշապատ 1871, 8-9:

պար է: Տարբեր հին դիցաբանութիւններում դա մարմնաւորում է 7 քոյքերի, որոնք սերտօրէն առնչուում են Օրիոնի (Հայկն համաստեղութեան յունական զուգահեռի) հետ: Դրանք կամ նրա հարսնացուներն են, կամ նրա կողմից հետապնդուող քոյքեր: Մըրան զուգահեռ էլ յիշենք, որ ըստ Հայկի մասին մեզ պատմող հայկական աղբյուրների Հայկը ունեցել է 3 որդի եւ հէնց 7 դուստր<sup>32</sup>: Իսկ Հայկն համաստեղութիւնն էլ երկնքում կերպաւուրել է գլխաւոր պաշտուող էակին՝ Հայր աստծուն<sup>33</sup>: Այսինքն, լիովին հնարաւոր է, որ Բոյլքը դիտուէր իբրեւ գլխաւոր պաշտուող էակի՝ Հայր աստծու (Հայկի) 7 դուստրերի հաւաքական երկնային կերպար:

Գալով երկորդ հնարաւոր տարբերակին՝ Բոյլքի դիտում-ները զուտ կիրառական նպատակով՝ ժամանակաշափութեան համար կատարուած լինելուն, նկատենք, որ այս տարբերակի համար եւս կայ լուրջ հիմնաւորում:

Պարզ հաշուարկը ցոյց է տալիս, որ խնդրոյ առարկայ ժամանկներում պէտք է հէնց Բոյլքում, կամ դրան շատ մօտ գըտնուած լինի ձմեռային արեւադարձի կէտը: Այսինքն, սա կը նշանակի, որ այդ ժամանակուայ դիտողները, հետեւելով երկնչանակի, որ այդ ժամանակուայ դիտողները, այսինքն՝ տարրուայ մէջ զանային որոշել ձմեռնամուտի պահը, այսինքն՝ տարրուայ այն օրը, երբ Արեւը ամենացածը դիրքում է, եւ որից յետոյ սկսում է Արեւի դիրքի աստիճանական բարձրացումը: Սա ինք-նին շատ կարեւոր է թէ՛ աստղագիտական, եւ թէ՛ կրօնական, պաշտամունքային առումներով: Փաստօրէն, նշեալ ժամանակներում այս դիտումներով կարելի պիտի լինէր սեւեռել տարրուայ այն պահը, որից սկսեալ աստիճանաբար բարձրանում է Ա-մէջ այն պահը, որից սկսեալ աստիճանաբար բարձրանում է Ա-Միհրի (Միթրայի) պաշտամունքի մէջ ձմեռնամուտը համարուել Միհրի (Միթրայի) պաշտամունքի մէջ ձմեռնամուտը համարուել Անյաղթ Արեւ աստծու՝ Միհրի (մահուան եւ) ծննդեան ժամանակ յիշենք նաեւ, որ հէնց միհրապաշտական այս տօնի եւ նակը: Գիտենք նաեւ, որ հէնց միհրապաշտական այս տօնի եւ դրա օրուայ պատճառով Դ. դարում արեւմտեան եկեղեցիները դրա օրուայ պատճառով Դ. դարում արեւմտեան եկեղեցիները Քրիստոսի ծննդեան տօնը նախապէս սահմանուած Յունուարի

32 Այս ամենի մասին տե՛ս ԲՐՈՒԺԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, 62. աշխ., 386-

399:

33 Ա.Յդ, 173-210:

**Երց տեղափոխեցին Դեկտեմբերի 25,** որ պահպանւում է մինչեւ օրս<sup>34</sup>: Անշուշտ, չի կարելի մտածել, թէ միհրապաշտական կրօնը այդ աստղագիտական օրը որդեգրել է հէնց այնպէս, յանկարծագիւտ, առանց պատմական նախահիմքի: Բնական է ակնկալել, որ միհրապաշտական կրօնից առաջ եւս ձմեռային արեւադարձի օրը պիտի եղած լինէր կրօնական առումով իմաստաւորուած, սրբագրծուած ժամանակ: Այսինքն, այս օրինակը թոյլ է տալիս հնարաւոր համարել ձմեռնամուտի օրուայ կրօնական նշումը խոր անցեալում եւ այդ աւանդոյթի յարատեւումը մինչեւ միհրապաշտութիւն: Երբ անցեալում եւ այդ աւանդոյթի յարատեւումը մինչեւ միհրապաշտութիւն:

Ստացուեց, որ մեզ հետաքրքրող ժամանակներում Բոյլքի առաջին ծագման դիտումները կարող էին ունենալ թէ՝ կրօնական-պաշտամունքային, եւ թէ՝ զուտ կիրառական, աստղագիտական նպատակ, որ է ձմեռային արեւադարձի պահը որոշելը: Այսինքն, դրական պատասխան ունենք նաեւ Բոյլքի դիտումների պատճառաբանուածութեան հարցին:

Ի մի բերելով, ստանում ենք, որ առկայ մատենագրական, ազգագրական, բանահիւսական նիւթերը եւ Մեծամօրի Փոքր բլրի հարթակի ժայռագիր նշանի վերլուծութիւնը թոյլ են տալիս հնարաւոր համարել, որ ն.թ. 9000 թուականին, Մեծամօրի տարածքից կատարուել են հէնց Բոյլքի ծագման դիտումներ, եւ ժայռագիր նշանն էլ հէնց Բոյլքի խորհրդանիշն է ու պատկերում է դրա տեսքը ծագման պահին:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

34 Այս մասին տե՛ս, օրինակ, ՄԱՆՈՒԿԵԱՆ, Ա. արք., Հայ եկեղեցու տօմերը, նայիրի, Թեհրան 1999, 38-42: Տե՛ս նաև ԱՄՓԻԹԵԱՏՐՈՎ Ա. Վ., Տկաչյան Ա. Վ. Յանձնագիր հայության պահպան առաջարկություն, Երևան 2000: Այս մասին առաջարկությունը պահպան առաջարկություն է առ պատկերում է դրա տեսքը ծագման պահին.

## Summary

### RELATIONS OF THE OLDEST ARMENIAN CALENDARS WITH HEAVENLY BODIES

GRIGOR BROUTIAN

The two known oldest Armenian calendars – Haykian and Protohaykian calendars were closely associated with observations of heavenly bodies. Particularly, in the Haykian calendar since 2341 BC, the main feast of the year was being determined by observing the heliacal rising of the main star of Orion. In the preceding Protohaykian calendar, the same star was used to check both the beginning and the end of the year. Only the period when this star was available for observations was considered as a year. The year in this calendar started with the heliacal rising of Betelgeuse star and ended with its heliacal setting. The rest of the time was considered as out of year.

The analysis of the rock engraving on the upper platform of the Small Hill in Metsamor shows that it represents the image of the well-known Pleiades asterism (stellar cluster M45) as it appears on the horizon while observing its heliacal rising from that place. Meanwhile the central line of the engraving shows the direction of Pleiades' rising in 9000 BC. At the time, Pleiades shows the direction of the spot of winter solstice. Therefore, the observations of Pleiades from Metsamor could serve as a means to check the exact time of winter solstice.